**ՏԵՂԵԿԱՆՔ**

**«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**Հոդված 43.** **Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների ցանկը**

1. Գործունեությունը համարվում է լիցենզավորման ենթակա, եթե այն ընդգրկված է սույն հոդվածի աղյուսակում:

2. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակ

| Հ/հ | Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը | Լիցեն-զավորող մարմինը | ***(սյունակը հանվել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | Ոլորտ | Փորձա-քննու-թյան պահանջ | Մրցու-թային կար-գով | Որակա-վորման պահանջ | Հաշվե-տվու-թյան պահանջ | Վայրի պա-հանջ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| | **1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների արտադրություն, ներմուծում կամ արտահանում (բացառությամբ ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող նյութերի և պայթեցման սարքավորումների, ռազմական նշանակության արտադրանք հանդիսացող արտադրատեսակների) | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 2. | Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների առևտուր, պահեստավորում կամ տեղափոխում | ԿՄ | | - | | - | Ո | Հ | Վ |
| 2.1. | Պայթուցիկ նյութերի, պայթեցման սարքավորումների կիրառում կամ պայթեցման աշխատանքների կատարում | ԿՄ | | - | | - | Ո | Հ | - |
| 2.2. | Հրագործական արտադրատեսակների արտադրություն, ներմուծում կամ արտահանում | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 2.3. | Հրագործական արտադրատեսակների առևտուր (իրացում), պահեստավորում կամ տեղափոխում (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական | ԿՄ | | - | | - | Ո | Հ | Վ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | արտադրատեսակների I և II դասերի, որոնց մասով լիցենզավորման պահանջը վերաբերում է միայն պահեստավորմանը և տեղափոխմանը) | | | | | | | | |
| 2.4. | Հրագործական արտադրատեսակների կիրառում (շահագործում) (բացառությամբ կենցաղային նշանակության հրագործական արտադրատեսակների I և II դասերի) | ԿՄ | | - | | - | Ռ | Հ | - |
| 3. | ***(ընթացիկ ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 4. | Քաղաքացիական և ծառայողական զենքի արտադրություն | ԿՄ | | - | Փ | - | Ռ | Հ | Վ |
| 5. | Քաղաքացիական և ծառայողական զենքի առևտուր | ԿՄ | | - | Փ | - | - | Հ | Վ |
| 6. | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների արտադրություն | ԿՄ | | - | Փ | | Ռ | Հ | Վ |
| 7. | Թմրամիջոցների կամ հոգեմետ նյութերի կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դրանց պրեկուրսորների ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր | ԿՄ | | - | Փ | - | Ռ | Հ | Վ |
| 7.1. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործում գիտական և ուսումնական նպատակներով | ԿՄ | | - | Փ | - | Ռ | Հ | Վ |
| 7.2. | Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի օգտագործմամբ փորձաքննության անցկացում | ԿՄ | | - | Փ | - | Ռ | Հ | Վ |
| 7.3. | Արտադրական կանեփի արտադրություն | ԿՄ | | - | Փ | - | Ռ | Հ | Վ |
| 7.4. | Արտադրական կանեփի ներմուծում, արտահանում կամ մեծածախ առևտուր | ԿՄ | | - | Փ | - | Ռ | Հ | Վ |
| 7.5. | Մեկուսացված համակարգում գենետիկորեն ձևափոխված օրգանիզմների գործածություն (ներառյալ՝ ներմուծումը, արտահանումը) | ԿՄ | - | - | - | - | - | - | Վ |
| 8. | Ռազմական նշանակության արտադրանքի ներմուծում և արտահանում | ԿՄ | | - | Փ | - | - | Հ | - |
| 9. | Ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրում | ԿՄ | | - | Փ | - | - | Հ | - |
| 10. | Ռազմական նշանակության արտադրանքի առևտրի միջնորդական գործունեություն (ռազմական նշանակության արտադրանքի առևտրի գործընթացում այլ անձանց համար պայմանագրերի կնքման բանակցությունների վարման, ինչպես նաև այդ արտադրանքի ձեռքբերման, փոխանցման և վաճառքի օժանդակման ծառայությունների մատուցում) | ԿՄ | | - | - | - | - | Հ | - |
| 11. | Մասնավոր պահնորդական գործունեություն | ԿՄ | | - | - | - | Ռ | - | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 12. | Ռազմական նշանակության արտադրանքի արտադրություն | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 13. | Հրաձգարանի գործարկում | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 14. | Զենքի հարդարում | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| | **2. *(բաժինն ուժը կորցրել է 27.10.17 ՀՕ-169-Ն)*** | | | | | | | | |
| | **3. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Դեղերի արտադրություն | ԿՄ | | | Փ | - | Ո | Հ | Վ |
| 2. | Դեղատնային գործունեություն | ԿՄ | | - | - | - | Ո | Հ | Վ |
| 3. | Բժշկական օգնության և սպասարկման իրականացում | ԿՄ | | - | - | - | Ո | - | Վ |
| 3.1 | Ֆիզիկական անձի կողմից անհատական լիցենզիայի կամ անցումային անհատական լիցենզիայի հիման վրա մասնագիտական գործունեության իրականացում | ԿՄ | - | - | - | - | Ո | - | - |
| 4. | ***(կետն ուժը կորցրել է 25.10.17 ՀՕ-159-Ն)*** | | | | | | | | |
| 5. | ***(կետն ուժը կորցրել է 19.06.13 ՀՕ-84-Ն)*** | | | | | | | | |
| 6. | Դեղերի մեծածախ իրացում | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 7. | Բժշկական արտադրատեսակների արտադրություն | ԿՄ | | | Փ | - | Ո | Հ | Վ |
| 8. | Բժշկական արտադրատեսակների սպասարկում | ԿՄ | | | Փ | - | Ո | Հ | |
| | **4. ԱՐԺՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | ***(կետն ուժը կորցրել է 25.03.20 ՀՕ-180-Ն)*** | | | | | | | | |
| 2. | Արտարժույթի առուվաճառք | ԿԲ | | - | - | - | Ո | Հ | Վ |
| 3. | Արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպում | ԿԲ | | - | - | - | Ո | Հ | Վ |
| | **5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Ներդրումային ծառայությունների մատուցում՝ ըստ «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ներդրումային ծառայությունների տեսակների | ԿԲ | | - | - | - | Ո | Հ | - |
| 2. | Կարգավորվող շուկայի օպերատորի գործունեություն | ԿԲ | | - | Փ | - | Ո | Հ | - |
| 3. | Կենտրոնական դեպոզիտարիայի գործունեություն | ԿԲ | | - | Փ | - | Ո | Հ | - |
| | **6. ԲԱՆԿԱՅԻՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Բանկային գործունեություն | ԿԲ | | - | Փ | - | Ո | Հ | - |
| 2. | Գրավատների կազմակերպում | ԿԲ | | - | - | - | - | Հ | Վ |
| 3. | Ներդրումային ֆոնդի կառավարման գործունեություն | ԿԲ | | - | - | - | Ո | Հ | - |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Կյանքի ապահովագրության իրականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով | ԿԲ | | - | Փ | - | Ռ | Հ | - |
| 5. | Ոչ կյանքի ապահովագրության իրականացում՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դասերով և ենթադասերով | ԿԲ | | - | Փ | - | Ռ | Հ | - |
| 6. | Ինկասացիոն ծառայությունների մատուցում | ԿՄ | | - | - | - | Ռ | - | - |
| 7. | Վարկային բյուրոյի գործունեություն | ԿԲ | | - | - | - | - | Հ | - |
| 8. | Ապահովագրական բրոքերային գործունեություն | ԿԲ | | - | - | - | Ռ | Հ | - |
| 9. | Վարկային կազմակերպության<br><br>գործունեություն | ԿԲ | | - | - | - | Ռ | Հ | - |
| 10. | Դրամական (փողային) փոխանցումների իրականացում | ԿԲ | | - | - | - | Ռ | Հ | - |
| 11. | Վճարային գործիքների և վճարահաշվարկային փաստաթղթերի պրոցեսինգի և քլիրինգի իրականացում | ԿԲ | | - | - | - | Ռ | Հ | - |
| 12. | Կյանքի վերաապահովագրության իրականացում | ԿԲ | | - | Փ | - | Ռ | Հ | - |
| 13. | Ոչ կյանքի վերաապահովագրության իրականացում | ԿԲ | | - | Փ | - | Ռ | Հ | - |
| 14. | Կրիպտոակտիվներով ծառայությունների մատուցում՝<br>ըստ «Կրիպտոակտիվների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կրիպտոակտիվներով ծառայությունների տեսակների | ԿԲ | - | - | - | - | - | Հ | - |
| | **7. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | ***(կետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | |
| | **7.1 ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | **Անասնաբուժական գործունեություն** | ԿՄ | | - | - | - | Ռ | - | Վ |
| | **8. ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Բնական գազի փոխադրում, բաշխում, ներկրում, արտահանում | ՀԾԿՀ | | Ա | - | - | - | Հ | Վ |
| 2. | Էլեկտրական էներգիայի արտադրություն (ներառյալ՝ էլեկտրական և ջերմային էներգիայի համակցված արտադրությունը), հաղորդում, բաշխում, էլեկտրական էներգիայի մատակարարում (ներառյալ՝ երաշխավորված), մեծածախ առևտուր | ՀԾԿՀ | | Ա | - | - | - | Հ | Վ |
| 3. | Ջերմային էներգիայի արտադրություն, փոխադրում, բաշխում | ՀԾԿՀ | | Ա | - | - | - | Հ | Վ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 4. | Էլեկտրաէներգետիկական և գազամատակարարման համակարգերի օպերատորի ծառայություններ | ՀԾԿՀ | | Ա | - | - | - | Հ | Վ |
| 5. | Էներգետիկական շուկայի օպերատորի ծառայություններ | ՀԾԿՀ | | Ա | - | - | - | Հ | - |
| | **8.1. Ջրային ոլորտ** | | | | | | | | |
| 1. | խմելու ջրամատակարարման և (կամ) ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցում | ՀԾԿՀ | | Ա | Փ | - | - | Հ | Վ |
| | **9. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Նախադպրոցական կրթական ծրագրի և (կամ) նախադպրոցական<br>ծառայության իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 2. | Տարրական հանրակրթական ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 3. | Հիմնական հանրակրթական ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 4. | Միջնակարգ հանրակրթական ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 5. | Մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստագործական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունք | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 5.1. | Մասնագիտական կրթության առաջին մակարդակի՝ արհեստավորի կամ կրտսեր մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 6. | Մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ միջին մասնագիտական հիմնական կրթական ծրագրի իրականացման իրավունք | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 6.1. | Մասնագիտական կրթության երկրորդ մակարդակի՝ մասնագետի որակավորման (ուղղվածության) ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 7. | Բակալավրի կրթական ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 8. | Մագիստրոսի կրթական ծրագրի իրականացում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| | **10. ՀԵՌԱՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ(ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ) ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1 | ***(ենթակետն ուժը կորցրել է 29.04.13 ՀՕ-48-Ն)*** | | | | | | | | |
| 1.1. | Հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի | ՀԾԿՀ | | Ա | - | - | Ո | Հ | Վ |
| 2. | ***(ենթակետն ուժը կորցրել է 29.04.13 ՀՕ-48-Ն)*** | | | | | | | | |
| 3. | ***(ենթակետն ուժը կորցրել է 29.04.13 ՀՕ-48-Ն)*** | | | | | | | | |
| 4. | Հեռուստառադիոհաղորդումների հեռարձակում | ՀՌԱՀ | | - | - | Մ | - | - | Վ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 5. | մասնավոր մուլտիպլեքսորի գործունեություն | ՀՌԱՀ | | - | Փ | Մ | - | Հ | Վ |
| | **11. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Փոստային կապի գործունեություն | ԿՄ | | Ա | - | - | - | - | - |
| | ***12. (բաժինն ուժը կորցրել է 27.10.17 ՀՕ-169-Ն)*** | | | | | | | | |
| 5. | ***(կետն ուժը կորցրել է 25.05.11 ՀՕ-199-Ն)*** | | | | | | | | |
| | **13. ԱՏՈՄԱՅԻՆ ԷՆԵՐԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Միջուկային տեղակայանքների կամ ռադիոակտիվ թափոնների պահեստարանների կամ ռադիոակտիվ թափոնների գերեզմանոցների հրապարակի ընտրում կամ նախագծում կամ կառուցում կամ շահագործում կամ շահագործումից հանում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 2. | Միջուկային նյութերի կամ ռադիոակտիվ նյութերի կամ ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի կամ ռադիոակտիվ թափոնների ներմուծում կամ արտահանում | ԿՄ | | - | - | - | - | Հ | - |
| 3. | Միջուկային նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ փոխադրում կամ պահեստավորում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 4. | Ռադիոակտիվ նյութերի արտադրություն կամ օգտագործում կամ փոխադրում կամ պահեստավորում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 5. | Ռադիոակտիվ նյութեր պարունակող սարքերի արտադրություն կամ օգտագործում կամ վերանորոգում կամ մոնտաժում և կարգաբերում կամ փոխադրում կամ պահեստավորում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 6. | Գեներացնող ճառագայթման աղբյուրների օգտագործում կամ կարգաբերում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 7. | Ռադիոակտիվ թափոնների վերամշակում կամ պահում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 8. | Միջուկային տեղակայանքների և միջուկային նյութերի ֆիզիկական պաշտպանության իրականացում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 9. | Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների համար անվտանգության տեսակետից կարևոր սարքերի, սարքավորումների, համակարգերի նախագծում կամ պատրաստում | ԱԷՕԲԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 10. | Ատոմային էներգիայի օգտագործման օբյեկտների նախագծերի և այլ փաստաթղթերի փորձաքննություն | ԱԷՕԲԿՄ | | - | - | - | Ո | Հ | Վ |
| 11. | Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառում անվտանգության ապահովման տեսակետից կարևոր պաշտոններ զբաղեցնող ֆիզիկական անձանց գործունեություն | ԱԷՕԲԿՄ | | - | - | - | Ո | Հ | Վ |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | **14. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Վտանգավոր թափոնների գործածություն | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 2. | ***(կետն ուժը կորցրել է 17.11.17 ՀՕ-209-Ն)*** | | | | | | | | |
| 3. | Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման կամ ռազմավարական էկոլոգիական գնահատման հաշվետվության մշակում | ԿՄ | | - | - | - | Ո | Հ | Վ |
| | **15. ՎԻՃԱԿԱԽԱՂԵՐԻ, ՇԱՀՈՒՄՆԵՐՈՎ ԽԱՂԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Վիճակախաղերի կազմակերպում | ԿՄ | | - | - | - | - | Հ | - |
| 2. | Շահումներով խաղերի կազմակերպում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| 3. | Ինտերնետ շահումով խաղերի կազմակերպում | ԿՄ | | | | | | Հ | Վ |
| 4. | Խաղատների կազմակերպում | ԿՄ | | - | - | - | - | Հ | Վ |
| | **16. ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Երկաթուղային տրանսպորտի գործունեության կազմակերպում | ԿՄ | | Ա | Փ | - | Ո | Հ | - |
| 2. | Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեություն | ԿՄ | | - | Փ | - | - | Հ | Վ |
| 3. | ***(կետն ուժը կորցրել է 20.11.14 ՀՕ-165-Ն)*** | | | | | | | | |
| 4. | Ֆիզիկական անձանց կողմից մեկ մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների իրականացում | ԿՄ | | - | - | - | - | - | - |
| 5. | Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների կազմակերպում | ԿՄ | | - | - | - | - | - | - |
| 6. | Սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազով աշխատելու համար ավտոտրանսպորտային միջոցների վրա գազաբալոնային սարքավորումների տեղադրման և (կամ) գազաբալոնների պարբերական վկայագրման գործունեության իրականացում | ԿՄ | | - | Փ | - | Ո | Հ | Վ |
| 7. | Անհատ ձեռնարկատերերի և կազմակերպությունների կողմից օդանավակայանի տաքսի ծառայության կազմակերպում | ԿՄ | | - | - | - | - | - | - |
| 8. | Վտանգավոր բեռներ փոխադրելու մասնագիտական վերապատրաստման գործունեության կազմակերպում | ԿՄ | | - | - | - | Ո | - | Վ |
| | **17. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | 1-ին դաս Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում, բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի (լիցենզիա | ԿՄ | | | | | Ո | Հ | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | | | | | | | | |
| 2. | 2-րդ դաս Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում, բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 3. | 3-րդ դաս Քաղաքաշինական փաստաթղթերի կազմում, բացառությամբ կոնստրուկտորական և ճարտարապետական մասերի (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 4. | 1-ին դաս Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 5. | 2-րդ դաս Քաղաքաշինական փաստաթղթերի փորձաքննություն (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 6. | 1-ին դաս Շինարարության իրականացում (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 7. | 2-րդ դաս Շինարարության իրականացում (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 8. | 3-րդ դաս Շինարարության իրականացում (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |
| 9. | 1-ին դաս Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ռ | Հ | |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10. | 2-րդ դաս<br>Շինարարության որակի տեխնիկական հսկողություն (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ո | Հ | |
| 11. | 1-ին դաս<br>Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ո | Հ | |
| 12. | 2-րդ դաս<br>Քաղաքաշինական գործունեության օբյեկտների հետախուզման և հետազննման ծառայությունների մատուցում (լիցենզիա չպահանջող աշխատանքների և ծառայությունների ցանկը հաստատվում է Կառավարության որոշմամբ) | ԿՄ | | | | | Ո | Հ | |
| | **18. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՅԼ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐ** | | | | | | | | |
| 1. | Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ օրենքով նախատեսված փորձաքննությունների իրականացում | ԿՄ | | - | Փ | - | - | - | - |
| 1.1. | Ավտոտրանսպորտային միջոցի (այդ թվում՝ գյուղատնտեսական տեխնիկայի) ձեռքբերման թրեյդ-ին առևտուր | ԿՄ | | - | - | - | - | - | Վ |
| 2. | ***(ենթակետն ուժը կորցրել է 08.12.11 ՀՕ-335-Ն)*** | | | | | | | | |
| 3. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 4. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 5. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 6. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 7. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 8. | ***(ենթակետն ուժը կորցրել է 04.12.19 ՀՕ-288-Ն)*** | | | | | | | | |
| 9. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 10. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| 11. | ***(ենթակետն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)*** | | | | | | | | |
| | **19. ՏԻԵԶԵՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌ** | | | | | | | | |
| 1. | Տիեզերական գործունեություն | ԿՄ | - | - | - | - | - | Հ | Վ |

3. Սույն հոդվածի աղյուսակում չնշված գործունեության տեսակներով ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրավունք ունեն զբաղվել առանց սահմանափակման, եթե տվյալ գործունեության տեսակով զբաղվելն օրենքով արգելված չէ:

3.1. ***(մասն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***

4. Սույն հոդվածի աղյուսակի երրորդ սյունակում հապավումներով սահմանվում են լիցենզիա տվող մարմինները: Աղյուսակի հապավումները վերծանվում են հետևյալ կերպ`

ԿԲ - Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ.

ՀԾԿՀ - Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

ՀՌԱՀ - Հայաստանի Հանրապետության հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով.

ԿՄ - Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմին կամ մարմիններ.

ԱԷՕԲԿՄ` Ատոմային էներգիայի օգտագործման բնագավառը կարգավորող մարմին:

5. ***(մասն ուժը կորցրել է 13.11.15 ՀՕ-121-Ն)***

6. Սույն հոդվածի աղյուսակի հինգերորդ սյունակում «Ա» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու համար չի պահանջվում լիցենզիա, եթե դրանք իրականացվում են ոչ ձեռնարկատիրական (տնտեսական) գործունեության նպատակով:

7. Միայն սույն հոդվածի աղյուսակի վեցերորդ սյունակում «Փ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու համար օրենքով կամ լիցենզավորման կարգերով կարող է պահանջվել ապրանքների, առարկաների, սարքավորումների, ինչպես նաև լիցենզավորման համար ներկայացված փաստաթղթերի փորձաքննական եզրակացություն:

8. Սույն հոդվածի աղյուսակի յոթերորդ սյունակում «Մ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տրվում է միայն մրցույթի արդյունքում:

9. Միայն սույն հոդվածի աղյուսակի ութերորդ սյունակում «Ո» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվելու լիցենզիան տալու համար կարող է իրականացվել ֆիզիկական անձանց մասնագիտական որակավորման ստուգում:

10. Միայն սույն հոդվածի աղյուսակի իններորդ սյունակում «Հ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձանցից լիցենզավորող մարմիններն իրավունք ունեն պահանջել լիցենզավորված գործունեությանն առնչվող հաշվետվություններ կամ տեղեկություններ:

11. Միայն սույն հոդվածի աղյուսակի տասներորդ սյունակում «Վ» տառով նշված գործունեության տեսակներով զբաղվող լիցենզավորված անձինք են պարտավոր լիցենզավորման ենթակա գործունեությունն իրականացնել միայն լիցենզիայում նշված վայրում: Սույն հոդվածի աղյուսակի «3. Առողջապահության բնագավառ» բաժնի 3-րդ կետով նախատեսված բժշկական օգնության և սպասարկման այն տեսակները, որոնք բժշկական օգնության և սպասարկման բնույթին և առանձնահատկություններին համապատասխան կարող են իրականացվել նաև լիցենզիայում նշված գործունեության իրականացման վայրից դուրս, սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

12. Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների պարզաբանումները տրվում են Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և «Տնտեսական գործունեության ընդհանուր դասակարգիչների» համաձայն: